ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ ՄԵՍՐՈՊ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Մանուկյան,

ի պատասխան Ձեր 12.02.2024թ. հ.07/02 և հ.08/02 գրությունների՝ Նոր Նորք վարչական շրջան, Լվովյան փողոց հ.2/1 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման վերաբերյալ, տեղեկացվում է.

Վերոնշյալ հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման նպատակով կառուցապատող՝ «ԷԿՈ ԲԻԼԴԻՆԳ» ՍՊ ընկերությանը 24.08.2022թ. Երևանի քաղաքապետարանի կողմից տրամադրվել է հ.01/18-07/1-Դ-32075-747 նախագծման թույլտվությունը: Այնուհետև, նշված նախագծման թույլտվության հիման վրա մշակված նախագիծը մինչ համաձայնեցման ներկայացվելը՝ ՀՀ գործող օրենսդրության պահանջների համաձայն ենթարկվել է նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջների համապատասխանությանը հավաստող փորձաքննությունների, ստանալով՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 2022 թվականի օգոստոսի 2-ի հ.49-Ա հրամանով ստեղծված հանձնաժողովի հ.159 պետական համալիր փորձաքննական հանձնաժողովի հ.95 (պետական համալիր փորձաքննություն), «Գրանդ քոնթրոլ» ՍՊ ընկերություն (լիցենզիա ՔՊԼ 17849) 19.04.2023թ. հ.09-2023 փորձագիտական դրական, ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի 04.04.2023թ. հ._ՔՏՄ/09.2.2/7261-23 և Քաղաքացիական ավիացիայի կոմիտեի 27.12.2023թ. հ.1.4/9.1/846-2023 եզրակացությունները:

Հիմք ընդունելով վերը նշված փորձաքննական եզրակացությունները՝ 15.08.2023թ. Երևանի քաղաքապետարանի կողմից համաձայնեցվել է հ.01/18-05/1-Դ-68621-745 նախագիծը և տրամադրվել հ. 01/18-Դ-68621-1616 շինարարության թույլտվությունը:

Երևանի քաղաքապետարանի քաղաքաշինական փաստաթղթեր մշակող ստորաբաժանումների կողմից աշխատանքային նախագծերի, նորմատիվային պահանջներին համապատասխանության ստուգում չի իրականացվում, փոխարենը՝ հիմք է ընդունվում ՀՀ կառավարության 19.03.2015թ. N596-Ն որոշմամբ ամրագրված, անհրաժեշտ՝ իրավասու մարմինների կողմից տրված փորձաքննությունների դրական եզրակացությունները:

Տեղեկացվում է նաև, որ գրությամբ նշված նորմատիվատեխնիկական պահանջների ապահովման վերաբերյալ բարձրացված հարցերը ենթակա են պարզաբանման ոլորտի լիազոր մարմնի՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ